


«Հաստատում են»

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի  
գործադիր տնօրեն՝  
Հ.Թավադյան



2019թ.

« 02 » « 04 »

## Հայաստանի պատանիների և աղջիկների 2019թ. առաջնության եզրափակիչ մրցաշարերի

### Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

#### Առաջնության կազմակերպիչը.

Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության եզրափակիչ մրցաշարերի կազմակերպիչն է Հայաստանի շախմատի ֆեդերացիան:

#### Անցկացման նպատակը.

Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության եզրափակիչ մրցաշարերի նպատակն է 10-18 տարեկան տարիքային խմբերի 2018թ. չեմպիոններին և մրցանակակիրներին որոշելը: Մրցաշարը հանդիսանում է ընտրական փուլ՝ Եվրոպայի և աշխարհի առաջնությունների համար:

#### Անցկացման վայրը.

Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության եզրափակիչ մրցաշարերը կանցկացվեն Հայաստանի շախմատի ակադեմիայում (հասցե՝ Շևչենկո 34, ք. Երևան, Հայաստան, հեռ. 010-448479):

#### Անցկացման ձևաչափը.

Առաջնությունն անցկացվում է հետևյալ տարիքային խմբերով.

- մինչև 10 տարեկան (2009 թ. և փոքր) պատանիներ և աղջիկներ
- մինչև 12 տարեկան (2007-2008 թթ.) պատանիներ և աղջիկներ
- մինչև 14 տարեկան (2005-2006 թթ.) պատանիներ և աղջիկներ
- մինչև 16 տարեկան (2003-2004 թթ.) պատանիներ և աղջիկներ
- մինչև 18 տարեկան (2001-2002 թթ.) պատանիներ և աղջիկներ

Առաջնությունն անցկացվում է ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն՝ շրջանային մրցակարգով: 10 և 12 տարիքային խմբերի մրցաշարերն անցկացվում են 12 մասնակիցներով, մնացած տարիքային խմբերը՝ 10 մասնակիցներով:

## Ժամակարգը.

90-ական րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 30 րոպե մինչև պարտիայի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

## Հաղթողների որոշման կարգը.

Մրցաշարում տեղերը բաշխվում են համաձայն հավաքած առավելագույն միավորների: Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր տարիքային խմբերում տեղերը կորոշվեն հետևյալ լրացուցիչ ցուցանիշներով.

1. ըստ Չոնենբորն-Բերգերի համակարգի,
2. ըստ սև գույնի ֆիգուրներով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,
3. ըստ անձնական հանդիպման (հանդիպումների) արդյունքի,
4. ըստ հաղթանակների առավելագույն քանակի:

## Առաջնության անցկացման ժամկետները.

Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության եզրափակիչ մրցաշարերը կանցկացվեն **ս.թ. ապրիլի 13-ից 23-ը:**

Խաղից ուշանալու թույլատրելի ժամանակը սահմանվում է **30 րոպե:**

• Խաղասրահ չի թույլատրվում ներկայանալ բջջային հեռախոսներով և այլ էլեկտրոնային սարքերով: Խաղի ընթացքում մասնակցի մոտ հեռախոս հայտնաբերելու դեպքում, համաձայն ՏԻԴԵ-ի կանոնների, կգրանցվի պարտություն, և միջադեպը կդրվի քննարկման Հայաստանի շախմատային ֆեդերացիայի նախագահության նիստին՝ հետագա պատժամիջոցներ սահմանելու համար: